,,ՍԳԿԿ,, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Արտակ Հարությունյանի կողմից, հնարավոր՝ վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, և Հարություն Գևորգյանի, քննարկելով ըստ Անժելա Գյուրջյանի /այսուհետ՝ դիմումատու/ Արտակ Հարությունյանի /այսուհետ կառավարիչ/ նկատմամբ ներկայացված թվով երկու դիմումի՝ 18.10.2024թ. և 23.10.2024թ., որոնք հասցեագրված էն եղել ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի տնօրեն՝ Անդրանիկ Ելինյանին, պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի ,,3,,-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարիչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, նախ՝ 20.12.2024թ.-ին, իսկ այնուհետ 13.01.2025թ.-ի և 24.01.2025թ.-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Նախ պետք է նշել, որ 20.12.2024թ.-ին նիստին ներկայացել էին Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը և սնանկության գործով կառավարիչ՝ Արտակ Հարությունյանը, իսկ դիմումատու Անժելա Գյուրջյանը կամ նրա ներկայացուցիչները չեն ներկայացել:Նշված նիստի ընդացքում հանձնաժողովի անդամները որոշեցին հիստը հետաձգել և հաջորդ նիստը նշանակվեց 13.01.2025թ.-ին:Նշված նիստին ներկայացել էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը, Արմինե Մովսիսյանը և սնանկության գործով կառավարիչ՝ Արտակ Հարությունյանը:Հարկ է նշել, որ նույն օրը, Անժելա Գյուրջյանի ներկայացուցիչ, փատաբան՝ Մանե Թամազյանի կողմից, ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի էլ.փոստին է ուղարկվում դիմում, որով Մանե Թամազյանը խնդրել է նիստը հետաձգել:Նշված դիմումը հանձնաժողովի կողմից բավարարվել է և նիստը հետաձգվել և հետագայում նշանակվել՝ 24.01.2025թ.-ի:Անհրաժեշտ է նշել, որ 24.01.2025թ.-ին նշանկված նիստի ծանուցման մեջ հստակ նշվել է այն փաստը, որ կողմերի չներկայանալու դեպքում, դիմումի քննությունը կիրականացվի նրանց բացակայությամբ: Հարկ է նշել նաև, որ դիմումատուի ներկայացուցիչի կողմից, 20.01.2025թ.-ին կրկին անգամ ներկայացվել դիմում, 24.01.2025թ.-ին նշանակված նիստը հետաձգելու մասին, որը հանձնաժողովի կողմից մերժվել է և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նիստին ներկայացել էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ Լուսինե Սարգսյանը և Հարություն Գևորգյանը, ուստի ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3. հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով, Ա.Սարգսյանը հայտնեց, որ նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը: Ա.Սարգսյանը նիստի ընթացքում հայտնեց, որ սնանկության գործով կառավարիչ Արտակ Հարությունյանը վատառողջ է և խնդրել է նիստը անցկացնել իր բացակայությամբ:Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ինչպես կառավարիչը, այնպես էլ դիմումատուն չեն ներկայացել, ինչպես նաև հիմք ընդունելով այն փաստը, որ հանձնաժողովի անդամները ծանոթ

են ինչպես դիմումի, այնպես էլ կառավարիչի կողմից ներկայացված դիրքորոշմանը, ուստի Ա.Սարգսյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամներին ինչպես ներկայացված դիմումին, այնպես էլ կառավարիչի կողմից ներկայացված առարկություններին և առաջարկեց միանքամից անցնել կարծիքներ հայտնելու փուլին: Իսկ մինչ այդ պետք է նշել, որ դիմումատուի կողմից ներկայացված դիմումով, դիմումատուն նշել է, որ ՀՀ սնանկության դատարանի վարույթում գտնվող թիվ ՍՆԴ/0207/04/24 սնանկության գործով, 17 սեպտեմբերի 2024-ին որոշվում է կայացվել բավարարելու սնանկության գործով կառավարիչ Արտակ Հարությունյանի կողմից ներկայացված անշարժ գույքը աճուրդ վաճառքի ներկայացնելու վերաբերյալ:Հայտնել է նաև այն մասին, որ փորձաքննության եզրակացությունը չի ստացել: Գույքի շուկայական արժեքի մասին տեղեկացել է միայն դատարանի կողմից ուղարկված որոշմամբ: Մեկ այլ անկախ փորձագետի տրված տեղեկատվությունից տեղեկացել է, որ նշված գույքի արժեքը գնահատվել է շուկայականից գրեթե կրկնակի, պակաս արժեքով և իր կարծիքով փորձագետի և սնանկության կառավարչի միջև առկա է միտում, ինչի կապակցությամբ էլ խնդրել է կատարողական վարույթ հարուցել, քանի որ արժեքների միջև առկա է զգալի տարբերություն:Դիմումին կից ներկայացրել է փորձաքննության եզրակացության լուսապատճենը:

Իր՝23.10.2024թ.-ին ներկայացված մեկ այլ նույնատիպ դիմումով հայտնել է, որ ՀՀ սնանկության դատարանի վարույթում գտնվող թիվ սնանկության գործով, 25 հոկտեմբերի 2024-ին որոշվում է/չնայած այն հանգամանքին, որ դիմումը ներկայացվել է 23.10.2024թ.-ին/ կայացվել, բավարարելու սնանկության գործով կառավարիչ Արտակ Հարությունյանի կողմից ներկայացված անշարժ գույքը աճուրդ վաճառքի ներկայացնելու վերաբերյալ:Հաշվի առնելով այն փաստը, որ 23.10.2024թ.-ին ներկայացված դիմումը նույնատիպ է 18.10.2024թ.-ին ներկայացված դիմին, ուստի վերջին ներկայացված դիմումումով հավելել է նաև, որ սնանկության գործով կառավարիչ Արտակ Հարությունյանի կողմից բերված փորձագետը իր բնակելի տուն չի մտել, չի նկարել որն է սենյակ, չի ուսումնասիրել գույքը ամբողջությամբ, իսկ իր կողմից բերված փորձագետը հանգամանորեն ուսումնասիրել ու նկարելլ է բոլոր անկյունները, բոլոր սենյակները, սանհանգույցները և բակը հետևաբար հայտնել է, որ էական շեղում է տրվել փորձագետի կողմից, որը հիմք է հանդիսանում աճուրդը կասեցնելու և կրկնակի փորձաքննություն նշանակելու անկախ փորձագետի կողմից, շուկայական արժեքի էական շեղումը ճշտելու համար:Նշված դիմումին կից ներկայացվել է նույն փորձաքննության եզրակացության լուսապատճենը, որը ներկայացվել էր 18.10.2024թ.-ին ներկայացված դիմումի հետ միասին:Իսկ դիմումին կից ներկայացվել է ,,Ա.Գ. ԷՍԹԵՅԹ,, ՍՊԸ-ի կողմից կազմված գրությունը ուղղված Անժելա Գյուրջյանին, որով ընկերության տնօրեն Գ.Պապոյանը հայտնում է, որ համաձայն Ա.Գյուրջյանի հետ 13.10.2024թ կնքված պայմանագրի, ներկայացնում են նախնական գնահատման ներկայացված գույքերի շուկայական արժեքների վերաբերյալ տվյալ գրությունը, համաձայն որի Երևան, Նոր-նորք Բագրևանդի թաղամաս թիվ 68/4 հասցեում գտնվող անշարժ գույքի (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ՝ 06062014-01-197) շուկայական արժեքը, 13.10.2024թ. դրությամբ, ըստ ընկերության կողմից կատարված նախնական գնահատման, կազմում է 350.000.000. /Երեք հարյուր հիսուն միլիոն/ ՀՀ դրամ, իսկ Երևան, Նոր-Նորք Բագրևանդի փողոց թիվ 68/3 հասցեում գտնվող անշարժ գույքի (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ՝ 05062020-01-0145) շուկայական արժեքը 13.10.2024թ դրությամբ, ըստ ընկերության կողմից կատարված նախնական գնահատման, կազմում է 300.000.000 /երեք հարյուր միլիոն/ ՀՀ դրամ:

Ներկայացված դիմումները ուղարկվել են ինչպես կարգապահական հանձնաժողովի անդամներին, այնպես էլ կառավարիչին և վերջինին պարտավորեցվել է ներկայացնելու պատասխան կամ դիրքորոշում ներկայացված դիմումներին: Սնանկության գործով կառավարիչ՝ Արտակ Հարությունյանի կողմից էլ.փոստի միջոցով ներկայացվել է պատասխան գրություն, որով վերջինս մասնավորապես հայտնել է, որ ՀՀ Սնանկության դատարանի 26.03.2024թ վճռով Անժելա Գյուրջյանը (ՀՀ Կոտայքի մարզ,Ջրվեժ,41փ,56տ,AS 0248177,տր.27.06.2018թ,003 կող.) ճանաչվել է սնանկ: Նույն դատարանի 03.04.2024թ.-ի որոշմամբ նշանակվել է պարտապանի սնանկության գործով կառավարիչ: <<Սնանկության մասին>> ՀՀ Օրենքի 75 հոդվածի 1 և 1.1 կետի հիմքով, հրավիրվել է Անժելա Գյուրջյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Հարությունյանի կողմից պարտատերերի ժողով՝օրակարգի հարցը՝1.Ծանոթացում գույքագրված գույքերի գնահատման եզրակացությունների հետ2. Գույքի վաճառքի ծրագրի քննարկում և քվեարկում:Տվյալ ժողովի վերաբերյալ ծանուցվել են պարտատեր՝ <<Ամերիաբանկ>>ՓԲԸ-ն,պարտապան՝ Անժելա Գյուրջյանը և գրավատու՝ Ռաֆայել Սամվելի Գյուրջյանը:

Այնուհետև իր կողմից 27.08.2024թ.-ին դատարանին ներկայացվել է միջնորդություն, որով խնդրել է հիմք ընդունելով <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 76 հոդվածի պահանջները թույլատրել՝ հրապարակային սակարկություններով վաճառել՝ Անժելա Գյուրջյանի վարկի ապահովման միջոց հանդիսացող, <<Ամերիաբանկ>>ՓԲԸ-ում գրավադրված՝ ք.Երևան,Նոր-Նորք ,Բագրևանդ թաղամաս 68/4 հասցեում գտնվող գույքը (գրավի վկայական 29112019-01-0229), ք.Երևան,Նոր-Նորք , Բագրևանդի փողոց 48 բնակելի տունը (գրավի վկայական 29112019-01-0063) և ք.Երևան,Նոր-Նորք ,Բագրևանդ թաղամաս 68/3 հասցեում գտնվող գույքը (գրավի վկայական 29112019-01-0146) գնահատված արժեքներով,որը անկախ գնահատողի կողմից գնահատվել հետևյալ կերպ՝

Լոտ1.ք.Երևան,Նոր Նորք,Բագրևանդի փ.,թիվ 68/4 հասցեում գտնվող առևտրի սրահ,(գրավի վկայական 29112019-01-0229),շինության նպատակը հասարակական,հողամասի մակերեսը 438.6 քմ,ավարտվածությունը 80 տոկոս և ավելին,երկու հարկանի և ձեղնահարկ,ձեղնահարկը սեփ.վկայականում արտացոլված չէ,ընդհանուր մակերեսը 287.4 քմ,պատերը ներկապատ,հատակը սալիկապատ,լավ վիճակում, լողավազան, շվաքարան,պարիսպ-----118.000.000 ՀՀ դրամ՝ հանդիսանում է գրավական <<Ամերիաբանկ>>ՓԲԸ-ում:

Լոտ 2.ք.Երևան,Նոր Նորք,Բագրևանդի փ.,թիվ 68/3 հասցեում գտնվող բնակելի տուն,(գրավի վկայական 29112019-01-0146),հողամասի մակերեսը 297.6 քմ,ավարտվածությունը 80 տոկոս և ավելին,երկու հարկանի և կիսանկուղային հարկ, ,ընդհանուր մակերեսըկիսանկուղ 142.7 քմ,1-ին հարկ 153.55քմ,2-րդ հարկ 139,6քմ,պատերը ներկապատ,հատակը սալիկապատ,լավ վիճակում,պարիսպ-----107.000.000 ՀՀ դրամ՝ հանդիսանում է գրավական <<Ամերիաբանկ>>ՓԲԸ-ում:

Տվյալ միջնորդության վերաբերյալ ծանուցվել են պարտատեր՝ <<Ամերիաբանկ>>ՓԲԸ-ն,պարտապան՝ Անժելա Գյուրջյանը և գրավատու՝ Ռաֆայել Սամվելի Գյուրջյանը:

ՀՀ Սնանկության դատարանը՝ թիվ ՍՆԴ/0214/04/24 սնանկության գործով 25.09.2024թ կայացրել է որոշում՝ Անժելա Գյուրջյան սնանկության գործով գրավադրված անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու մասին:Աճուրդի անցկացման օրը, ժամը, վայրը և գույքերի նկարագրությունը հրապարակվել է azdarar.am կայքում: Ըստ

կիառավարիչի կարելի է փաստել, որ պարտապան՝ Անժելա Գյուրջյանը առնվազն երեք անգամ ծանուցվել է և առնվազն երեք անգամ տեղեկացված է եղել գույքերի գնահատման արժեքների և գնահատման եզրակացությունների հետ:

Կառավարիչը հայտնել է, որ Անժելա Գյուրջյանի կողմից ստացել է միջնորդություն որով խնդրել է կասեցնել 17.09.2024թ դատարանի կողմից կայացված որոշումը, որը դատարանի որոշմամբ մերժվել է:Կառավարիչը իր պատասխան գրությամբ հայտնել է, որ ՍՆԴ/0207/04/24 սնանկության գործը վերաբերվում է <<ԱՆԳՈ ԼՈՋԻՍՏԻԿՍ>>ՍՊԸ-ին (ք.Երևան,Նոր Նորք ,Բագրեվանդ 68/4 , ՀՎՀՀ 00902993 , որով ՀՀ Սնանկության դատարանը մինչ օրս գույքը կամ գույքերը հրապարակային սակարկություններով վաճառքի թույլտվության որոշում չի կայացրել:Ըստ կառավարիչի, դիմումատուի կողմից նշված այն հանգամանքը, թե 1.պարտապանը չի ստացել գնահատման եզրակացությունը և տեղեկացել է միայն դատարանի կողմից ուղարկված որոշումից ակնհայտ սուտ է և նշված դիրքորոշմանը կից ներկայացրել է մ ծանուցման և ստացման անդորագրերը.2. գույքը գնահատվել կրկնակի պակաս՝գույքերը գնահատվել են անկախ գնահատողի կողմից, որի վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում առարկություն չի ներկայացվել ոչ պարտատեր՝ <<Ամերիաբանկ>>ՓԲԸ-ի կողմից , ոչ պարտապան՝ Անժելա Գյուրջյանի կողից և ոչ գրավատու՝ Ռաֆայել Սամվելի Գյուրջյանի կողմից :Ինչ վերաբերվում է արտապանի կողմից ներկայացված նախնական գնահատման հաշվետվությանը, ապա կառավարիչը հայտնել է, որ նախ դա ընդհամենը նախնական հաշվետվությունը, որը չի կարող հիմք հանդիսանալ և երկրորդը կառավարիչը գնահատող կազմակերպության կողմից ստացել է պարզաբանում, համաձայն որի տվյալ գրությունը չի հանդիսանում գնահատման հաշվետվություն և չի կարող հիմք հանդիսանալ գույքերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար, ինչպես նաև հայտնել է ,որ գրության մեջ տեղի է ունեցել տպագրական վրիպակ:Ինչ վերաբերվում է պարտապանի կողմից կատարված հետևություններին, ինչպես նաև կրկնակի փորձաքննություն նշանակելու պահանջին կառավարիչը հայտնել է, որ պարտապանը անհեթեթություն շարադրելու ու զրպատելու միջոցով փորձում է անհիմն ձգձգել սնանկության բնականոն գործընթացը որը անթույլատրելի է օրենքով:

Կառավարիչի կողմից հայտնել է նաև, որ հիմք ընդունելով վերոգրյալը նա գտնում է, որ ներկայացված միջնորդությունը քննարկման ենթակա չէ կամ ենթակա է մերժման ամբողջությամբ,քանի որ՝

1.ՍՆԴ/0207/04/24 սնանկության գործով դատարանը մինչ օրս գույքերը հրապարակային սակարկություններով վաճառքի թույլտվության որոշում չի կայացրել

2. ՀՀ Սնանկության դատարանի կողմից 17.09.2024թ ոչ ՍՆԴ/0207/04/24 սնանկության գործով, ոչ ՍՆԴ/0214/04/24 սնանկության գործով հրապարակային սակարկություններով վաճառքի թույլտվության որոշում չի կայացրել

3. ենթադրելով որ պարտապանը իր միջնորդությունը ներկայացրել է թիվ ՍՆԴ/0214/04/24 սնանկության գործով ապա իր կողմից ներկայացված գնահատման հաշվետվությունը հիմք չի կարող հանդիսանալ քանի որ չունի իրավական ուժ

4. գիտակցելով, որ այլևս բաց է թողել Կառավարչի գործողությունները բողոքարկելու՝ օրենքով սահմանված ժամկետը, Դատարանի որոշումը բողոքարկելով, փաստորեն քողարկված կերպով վիճարկում է Կառավարչի գործողությունը կամ անգործությունը՝ ինչն անթույլատրելի է և հակասում է արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող իրավական որոշակիության սկզբունքին:

Ինչ վերաբերվում է պարտապանի կողմից "ՍԳԿԿ" ԻԿԿ կարգապահական հանձնաժողով ներկայացված դիմումներին, կառավարիչը հայտնել է որ դիմումներում նշված հետևությունները, ինչպես նաև կրկնակի փորձաքննություն նշանակելու պահանջը, անհեթեթություն է, պարտապանը անհեթեթություն շարադրելու ու զրպատելու միջոցով փորձում է անհիմն ձգձգել սնանկության բնականոն գործընթացը որը անթույլատրելի է օրենքով:Ըստ կառավարիչի դիմումատուի կողմից չի ներկայացվել որևը ապացույց, դիմումում նշված է զրպարտանք, այլ դիմումները կազմված են միայն ենթադրությունների և անհիմն փաստերի վրա:Կառավարիչը նեշել է նաև, որ պարտապանի միջնորդության հիման վրա ՀՀ Սնանկության դատարանում կայացել է երկու դատական նիստ, սակայն ոչ պարտապանը, ոչ նրա ներկայացուցիչը չեն ներկայացել նիստերին և չեն ներկայացրել որևը ապացույց իրենց կողմից ներկայցված անհեթեթության վերաբերյալ: ՀՀ սնանկության դատարանի 13.12.2024թ որոշմամբ Անժելա Գյուրջյանի դիմումը մերժվել է: Հիմք ընդունելով վերոգրյալը կառավարիչը գտնում է, որ Անժելա Գյուրջյանի կողմից ներկայացված դիմումը անհեթեթություն է և ենթակա է մերժման ամբողջությամբ:

Կառավարիչը հայտնել է նաև հայտնում եմ որ ծանուցված է 24.01.2025թ նշանակված լսումների վերաբերյալ, բայց առողջական խնդիրների, ինչպես նաև ծանրաբեռնվածության պատճառով չի կարող գտնվել նիստին և խնդրել է լսումները անցկացնել իր բացակայությամբ, հիմք ընդունելով իր կողմից ներկայացված առարկությունը, ծանուցումները հավաստող անդորագրերը և ՀՀ սնանկության դատարանի որոշումները:

Հաշվի առնելով այն հանագամանքը, որ ինչպես դիմումատուն այնպես էլ կառավարիչը նիստին չ'ին ներկայացել, ուստի Ա.Սարգսյանը առաջարկեց նիստը համարել փակված և անցնել կարծիքների, որը ընդունվեց միաձայն:Այնուհետև հանձնաժողովի անդամները, ուսումնասիրելով հանձնաժողովին տրամադրված նյութերը, այդ նյութերը վերլուծելով և համադրելով իրավական ակտերի և օրենքի պահանջների հետ, հայտնեցին իրենց կարծիքները:

Հարություն Գևորգյանը հայտնեց իր կարծիքը առ այն, որ իր կողմից վերլուծելով սույն գործը հայտնեց, որ կառավարիչի կողմից կարգապահական կանոնների խախտում տեղի չի ունեցել և դեմ կքվեարկի կառավարիչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ

Լուսինե Սարգսյանը հայտնեց իր կարծիքը առ այն, որ կառավարիչի կողմից թե վարքագծի և թե օրենքի խախտումներ չեն կատարվել, քանի որ գույքի գնահատման և իրացման միջնորդությունները ներկայացվել են դատարան օրենքով սահմանված կարգով, առավել ևս որ պարտապանը իրավունք էլ չուներ առարկեր քույքի արժեքի վերաբերյալ, սակայն այս իրավիճակում ներկայացված փաստաթղթերից ծանոթացանք, որ դիմումատուն գույքի կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացրել դատարան, որը դատարանի կողմից մերժվել է և գտնում է, որ կառավարիչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր առկա չեն:

Ա.Սարգսյանը հայտնեց կարծիք առ այն, որ իրականում նույն հիմքով, Անժելա Գյուրջյանի կողմից դատարանին է ներկայացվել դիմում, որով դիմումատուն խնդրել է կասեցնել դատարանի որոշմամբ նշանակված աճուրդները և նշանակել նոր փորձաքննություն, որը դատարանի 13.12.2024թ.-ի որոշմամբ մերժվել է:Ա.Սարգսյանը հավելաց նաև, որ եթե անդրադառնանք կառավարիչի գործողություններին և դիմումատուի իրավունքների պաշտպանության խախտմանը, ապա պետք է նշել, որ այդ մասովել կառավարիչը կատարել է իր գործողությունները անթերի, այն է՝ գուքի իրացման հետ կապված ծանուցումները ուղարկվել են նաև պարտապանին, չնայած այն հանգամանքին, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նման ծանուցումը ուղարկելու միայն պարտատիրոջը:Պարտատիրոջ կողմից, գույքի իրացման հետ կապված, դատարանի կողմից կայացված դատական ակտերի դեմ բեղեքներ չի ներկայացվել և այդ իսկ պատճառով էլ նույնպես գտնում է, որ կառավարիչի նկատմամբ կարգապահական տույժ ենթակա չե կիրառման:

Այսինքն՝ նման պայմաններում հանձնաժողովը միաձայն որոշում կայացրեց Արտակ Հարությունյանի նկատմամբ կարգապահական տույժ չկիրառել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չնայած այն հանգամանքին, որ սույն գործով առկա է դատական ակտ, որում քննության առարակ է դարձվել ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կանոններով կատարված միջնորդության քննարկումը, սակայն սույն գործի քննարկման առարկա է պետք դարձնել այն հանգամանքը, թե արդյոք հենց կառավարիչի կողմից են կատարվել կարգապահական կանոնների խախտում թե ոչ, մասնավորապես՝ արդյոք սնանկության գործով կառավարիչի կողմից խախտվել են գույքը ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի կանոններով վաճառելու կանոնները:Հավելենք նաև, որ կարգապահական հանձնաժողովը չի կարող անդրադառնալ դիմումատուի կողմից տրված դիմումի այնպիսի հանգամանքներին, որոնք կազմված են միայն ենթադրությունների հիման վրա, այն է՝ դիմումում նշված այն հանգամանքին, թե կառավարիչի և գնահատողի միջև եղել են փոխադարձ պայմանավորվածություններ և վերջիններիս միջև առկա է միտում:Միաժամանակ դիմումատուն իր դիմումով խնդրել է կատարողական վարույթ հարուցել, քանի որ արժեքների միջև առկա է զգալի տարբերություն:Նշված հարցի կապակցությամբ պետք է հստակեցնել, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի հիմքով, կառավարիչի նկատմամբ,

կարգապահական հանձնաժողովը միայն հարուցում է կարգապահական վարույթ, իսկ նույն օրենքի 27.5 հոդվածի համաձայն, կարգապահական հանձնաժողովը կառավարիչի նկատմամբ կրառում է կարգապահական տույժ, ակմ կարճում այն:

Սակայն հիմք ընդունելով այն փաստը, որ դիմումը ստացված է ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի կողմից, որը մակագրված է կարգապահական հանձնաժողովին, իսկ հանձնաժողովի կողմից հարուցված է կարգապահական վարույթ, ուստի քննության առարկա պետք է դարձնել դիմումում նշված այնպիսի հանգամանքներին, որում մատնանշված են միայն կառավարիչի վարքքծի կանոնների խախման հանգամանքները:

Այսպես՝ դիմումատուն իր դիմումում նշել էայն հանգամանքը, թե փորձաքննության եզրակացություն չի ստացել և գույքի շուկայական արժեքի մասին տեղեկացել եմ միայն դատարանի կողմից ուղարկված որոշմամբ:Նշված հարցի կապակցությամբ նախ պետք է նշել, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն, կառավարիչի կողմից հրավիրված պարտատերերի ժողովին, ներկա է եղել նաև դիմումատուն և նշված նորմով քննարկվել է պարտապանի գույքի վաճառքի ծարագիրը, իսկ նույն հովածի 1.1 մասով սահմանվում է, որ Գույքի վաճառքի ծրագիրը պետք է ներառի պարտապանի ամբողջ գույքի, ներառյալ՝ պահանջի իրավունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (անվանումները, նկարագրությունը, քանակը, հաշվեկշռային արժեքը), վաճառքի նախատեսվող ձևը, նախնական գնահատված արժեքները՝ ըստ գույքի տեսակի:Այսինքն՝ նշված ժողովի ընթացքում դիմումատու՝ պարտապանը տեղեկացված է եղել արդեն գույքի արժեքի մասին և վերջինիս արգել չի եղել առարկելու՝ պարտատերերի ժողովի որոշման դեմ:Բացի այդ հարկ է նշել նաև, որ ,,սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատարան՝ այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին սույն օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, աճուրդի առաջարկվող մեկնարկային գինը: Միջնորդությանը կից ներկայացվում է գույքի գնահատման ակտը (անկախ գնահատողի կողմից գնահատված լինելու դեպքում՝ եզրակացությունը):Նախ հարկ է նշել, որ գույքը հրապարակային սակրկությունների միջոցով վաճառելու մասին իր մտադրության մասին է կառավարիչը տեղեկացնում միայն պարտատիրոջը, այլ ոչ թե պարտապանին, բացի այդ հարկ է նշել նաև, որ այդ միջնորդությանը, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, այն է՝ Պարտատերերն իրավունք ունեն հրապարակային սակարկություններով պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին կառավարչի միջնորդության դեմ յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնելու դատարան և առաջարկելու աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին՝ գույքի վաճառքի իր կողմից առաջարկվող մեկնարկային գնի 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ վճարելով սնանկության հատուկ հաշվին, առարկություն ներկայացնելու իրավունքը վերապահված է միայն պարտատիրոջը:

Չնայած վերը նշված բոլոր հանգամանքներին, առկա նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գույքի իրացման հետ կապված, կառավարիչի կողմից կատարված բոլոր գործընթացների արդյունքում կայացված դատական ակտերը, մասնավորապես՝ դատարանի 25 հոկտեմբերի 2024-ին կայացրած որոշվում է, որով դատարանը բավարարելէ սնանկության

գործով կառավարիչ Արտակ Հարությունյանի կողմից ներկայացված միջնորդությունը անշարժ գույքը հրապարակային սակարկությունների միջոցով վաճառքի մասին, չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:Այսինքն՝ դատարանը քննության առնելով կառավարիչի կողմից ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի կանոններով ներկայացված միջնորդությունը, գտել է, որ կառավարիչի կողմից կազմված միջնորդությունը և միջնորդությանը ներկայացված կից ապացույցները /հաշվետվություն՝ եզրակացություն, ծանուցումներ, միջնորդության օրենքի տեսանկյունով հիմնավորումներ/, գտել է որ միջնորդությունը ենթակա է բավարարման:Վերլուծելով նշված դատական ակտի առկայությունը, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի դրույթները պարզ է դառնում, որ դիմումատուի կողմից նշված այն փաստը թե վերջինս փորձաքննության եզրակացություն նա չի ստացել և գույքի շուկայական արժեքի մասին տեղեկացել է միայն դատարանի կողմից ուղարկված որոշմամբ, անհրաժեշտ է փաստել, որ պարտապան դիմումատուն չպետք է ստանար այդ եզրակացությունը,իսկ եթե նշված պարագայիմ խոսքը գնում է վերջինիս իրավունքների խախտմանը, ապա դիմումատուն իր դիմումում է նշում այն փաստը, որ ստացել է հրապարակային սկակրկությունների միջոցով գույքը վաճառելու թուլատրելու մասին որոշումը, որում նշված է եղել ինչպես գույքի արժեքը, այնպես էլ եզրակացության առկայության հանգամանքը, սակայն նշված որոշման դեմ վերքաննիչ բողոք չի ներկայացվել, իսկ նման պայմաններում, որոշմամբ հաստատվել է կառավարիչի կողմից ճիշտ գործողությունների կատարման հանգամանքը:

Դիմումատուի կողմից տրված դիմումը էլ ավելի անհիմն է դառնում այն փաստական հանգամանքներով, որ Ա.Հարությունյանը բանավոր կերպով դիմել է ,,Ա.Գ. ԷՍԹԵՅԹ,, ՍՊԸ-ին, որին 21.10.2024թ.-ի պատասխան գրությամբ, ընկերության տնօրենը հայտնել է, որ կազմակերպության կողմից կատարվել է Երևան, Նոր-Նորք Բագրևանդի փողոց թիվ 68/4 հասցեում գտնվող առևրի սրահի (անշարժ՝գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 06062014-01-0197 տրվաղ 06.06.2014թ) շուկայական արժեքի գնահատում 08.08.2024թ դրությամբ, որը կազմել է 118.000.000 մեկ հարյուր տասնութ միլիոն/ ՀՀ դրամ և համապատասխան հաշվետվությունը հանձնվել է կառավարիչին, ինչպես նաև կատարվել է երևան, Նոր-Նորք Բագրևանդի փողոց թիվ 68/3 հասցեում գտնվող բնակելի տան (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 05062020-01-0145 տրված 05.06.2020թ) շուկայական արժեքի գնահատում 08.08.2024թ դրությամբ, որը կազմել է 107.000.000 մեկ հարյուր յոթ միլիոն / ՀՀ դրամ և համապատասխան հաշվետվությունը նույնպես հանձնվել է կառավարիչին:Ինչ վերաբերվում է ՀՀ քաղաքացի Անժելա Սամվելի Գյուրջինյանին 16.10.2024թ տրամադրված գրությանը, ապա պարզաբանել են , որ տվյալ գրության մեջ առկա են տպագրական վրիպումներ, մասնավորապես տպագրական սխալ է հանդիսանում երևան, Նոր-Նորք Բագրևանդի թաղամաս թիվ 68/4 հասցեում գտնվող անշարժ գույքի նշված շուկայական արժեքը (350.000.000/ երեք հարյուր հիսուն միլիոն / ՀՀ դրամ), ինչպես նաև տպագրական սխալ է հանդիսանում Երևան, Նոր-Նորք Բագրևանդի փողոց թիվ 68/3

հասցեում գտնվող անշարժ գույքի նշված շուկայական արժեքը (300.000.000 /երեք հարյուր միլիոն /ՀՀ դրամ):Նշված ընկերությունը հայտնել է նաև,որ ՀՀ քաղաքացի Անժելա Սամվելի Գյուրջինյանին 16.10.2024թ տրամադրված գրությունը չի հանդիսանում գնահատման հաշվետվություն, անչ չի կարող հիմք հանդիսանալ գույքի վերաբերյալ որոշումներ կայացնելու մասնավորապես սնանկության վարույթով գործընթացներում:Թե ինչով է պայմանավորված այդ վրիպակը պարզել հնարավոր չեր, քանի որ նիստերին ինչպես դիմումատուն, այնպես էլ կառավարիչը չէին ներկայացել:

Դիմումատուի կողմից նշված այն փաստարկները, թե փորձքննությունը փորձագետի կողմից կատարվել է առանց փաստացի տեղազննության կամ տեղանայման և կառավարիչը փոխադարձ համաձայնության է եղել գնահատողի հետ, չի կարող քննության առարկա դարձվել հանձնաժողովի կողմից, քանի որ նշված հանգամանքների վերաբերյալ ոակա չեն համապատասխան ապացույցներ, նշվաշ հանգամանքները դիմումում գրված են լոք հայտարարության տեսքով:

Հիմք ընդունելով սույն եզրակացության մեջ նշված հանգամանքները և ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ բացակայում են կարգապահական խախտման հիմքերը և հատկանիշները, ինչպես նաև այն փաստը, որ կառավարչի կողմից առկա չէ այնպիսի գործողություն, որը կարող է բերել վերջինիս նկատմամբ կարգապահական տույժի կիրառմանը, ինչով պայմանավորված կառավարիչ՝ Արտակ Հարությունյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ 48 թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան